

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՀՀ Բնապահպանության

Նախարար Ա. Հարությունյան

Ա. Հարությունյան



«16» «Յուլիս» 2011թ.
թիվ 93-ՉԿ հրամանով

ՀՀ Բնապահպանության Նախարարի

2011թ. «Յուլիս» «16» N 93-ՉԿ հրամանի
Օրինակ թիվ 1

«ԳՐԱՆՅՎԱԾ Է»

ՀՀ Իրավաբանական անձանց պետական

նեգիսի գործակալության կողմից

2003թ. ապրիլի «15»

Գրանցման թիվ 81.210.00272

Վկայականի թիվ 03Ա. 059026


Փոփոխության գրանցման թիվ 2

Փոփոխության գրանցման օր 24.05.2011թ

Պետական նեգիստի Նոյեմբերյանի

տարածքային բաժնի պետ

Ս. Բոչարյան



«ԶԻԿԱՏԱՐ» ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Զիկատար» բնապահպանական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետև Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող բնապահպանական ոլորտի գծով փորձարարական և ուսուցողական աշխատանքներ կատարող կազմակերպություն է, որը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և այլ օրենքների ու նորմատիվ իրավական ակտերի հիման վրա, ինչպես նաև սույն կանոնադրությամբ:

«Զիկատար» բնապահպանական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը ստեղծվել է ՀՀ կառավարության 26 սեպտեմբերի 2002թ.-ի թիվ 1587-Ն որոշման հիման վրա «Անտառային գիտափորձարարական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության վերակազմավորման արդյունքում և հանդիսանում է «Անտառային գիտափորձարարական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդողը:

2. Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության /այսուհետ՝ հիմնադիր/:

3. Կազմակերպության կանոնադրությունը դրա հիմնադիր փաստաթուղթն է:

4. Կազմակերպությունն իր ենթակայության «Զիկատար» պետական արգելավայրի տարածքում ապահովվում է «Զիկատար» պետական արգելավայրի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ ամրագրված պահանջների կատարումը:

5. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և կազմակերպության հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանմամբ կլոր կնիք, դրոշմակնիք, կարող է ունենալ ձևաթղթեր, խորհրդանիշ, ապրանքային և առևտրային այլ նշաններ:

6. Կազմակերպության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Զիկատար» բնապահպանական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն

հայերեն կրճատ՝ «ԶԲԿ» ՊՈԱԿ

ռուսերեն լրիվ՝ "Зикатар" экологический центр" Государственная некоммерческая организация

ռուսերեն կրճատ՝ "ЗЭЦ" ГНКО

անգլերեն լրիվ՝ "Zikatar" environmental center " State Non-Commercial organization

անգլերեն կրճատ՝ "ZEC" SNCO

7. Կազմակերպության գտնվելու վայրն է՝

Հայաստանի Հանրապետություն ք. Տավուշի մարզ. գ. Կողբ

II ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

8. Կազմակերպության գործունեության առարկան «Զիկատար» պետական արգելավայրի տարածքում գտնվող անտառային բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության եզակի հուշարձանների, բնական պաշարների բնականոն զարգացման, պահպանության, պաշտպանության, վերականգնման, վերարտադրության, ինչպես նաև բնական և ռեկրեացիոն ռեսուրսների կայուն օգտագործման, անտառչինական աշխատանքների, անտառ-էկոլոգիական փորձարարական ուսումնասիրությունների, անտառի գենետիկական պաշարների պահպանության ու վերարտադրության գիտաներդրական փորձարկումների իրականացման ապահովումն է:

9. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են՝

1) «Զիկատար» պետական արգելավայրի տարածքում բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, պաշտպանության, հաշվառման, գույքագրման, մոնիթորինգի, բնության տարեգրության վարման, ինչպես նաև պետական արգելավայրի բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումը.

2) անտառչինական աշխատանքների իրականացումը,

3) անտառէկոլոգիական գիտափորձարարական ուսումնասիրությունների և անտառի գենետիկական պաշարների պահպանության և վերարտադրության գիտաներդրական փորձարկումների կազմակերպումն ու իրականացումը,

4) անտառային պաշարների մասին տեղեկատվական բանկի ստեղծումը և օգտագործման արդյունավետ ձևերի մշակումը,

5) կենսաբազմազանության պահպանման նպատակով արժեքավոր և հազվագյուտ տեսակների հավաքածուների կազմումը,

6) անտառագիտասփյուռ աշխատանքները, բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման և անտառատնտեսության բնագավառի համար կադրերի վերապատրաստումը և ուսումնաարտադրական պրակտիկայի կազմակերպումը.

7) բնական էկոհամակարգերի՝ բուսական և կենդանական աշխարհի հաշվառումն ու կադաստրի վարումը,

8) պետական արգելավայրի բնական էկոհամակարգի հավասարակշռությունը խախտող գործողությունների կանխարգելումը,

9) հրդեհային անվտանգության միջոցների իրականացումը,

10. Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

ա) Գիտական նպատակներով պտուղների, հատապտուղների և ընկուզենու աճեցում,

բ) անտառի նյութական գնահատում և անտառի գնահատում

գ) տնկանյութի աճեցում,

դ) մասնագիտական գիտելիքների վճարով դասընթացների կազմակերպում:

III ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

11. Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, դրա լիազորված պետական մարմինը:

12. Կազմակերպության հիմնադիրը ունի դրա գործունեությունը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

13. Հիմնադրի բացառիկ լիազորությունները սահմանվում են «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

14. Կազմակերպության ընդհանուր կառավարումը իրականացնում է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը, որպես պետական լիազորված մարմին:

15. Պետական լիազորված մարմնի լիազորություններն են՝

ա) կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը,

բ) կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը,

գ) կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և/կամ ամրացվող պետությանը պատկանող գույքի կազմի հաստատումը,

դ) կազմակերպության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

ե) կազմակերպության աշխատանքային ծրագրերի հաստատումը և գործունեության վերահսկողությունը,

զ) կազմակերպության գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանների, հրահանգների, կարգադրությունների ու ցուցումների կասեցումը կամ դրանք ուժը կորցրած ճանաչելը,

է) կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունները լսելը և դրանց գործունեության վերստուգման արդյունքները քննելը,

ը) կազմակերպությանն ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ վերահսկողության իրականացումը,

թ) կազմակերպության տարեկան հաշվետվությունների և տարեկան հաշվեկշռի հաստատումը,

ժ) կազմակերպության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը,

ժա) «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմնադրի որոշումներով և պետական կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթների իրականացումը:

16. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին նշանակում և ազատում է լիազորված պետական մարմինը:

Կազմակերպության տնօրենը օրենքով, հիմնադրի և լիազորված մարմնի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, հիմնադիր կամ լիազորված պետական մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

17. Կազմակերպության տնօրենի հետ կնքվում է պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է լիազորված պետական մարմնի ղեկավարը: Պայմանագրում սահմանվում են նրա իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները լիազորված պետական մարմնի պետական կազմակերպության կառավարման այլ մարմինների հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարեցման օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և այլ դրույթներ, որոնք պայմանավորվող կողմերը կգտնեն անհրաժեշտ: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատատանքային օրենսդրության պահանջներին:

18. Տնօրենի պաշտոնում նշանակված անձը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

19. Տնօրենի պաշտոնում նշանակված անձը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը և/կամ պետությանը պատճառած վնասի համար: Տնօրենի պաշտոնում նշանակված անձի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

20. Տնօրենը պարտավոր է չկատարել հիմնադրի, լիազորված պետական մարմնի օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

21. Տնօրենն իրականացնում է օրենսդրությամբ սահմանված և պայմանագով իրեն տրված այլ լիազորություններ:

22. Տնօրենի բացակայության դեպքում, լիազորված պետական մարմնի գրավոր որոշման համաձայն այդ լիազորությունները իրականացնում է այլ անձ:

23. Տնօրենի տեղակալները նշանակվում են լիազորված պետական մարմնի կողմից տնօրենի ներկայացմամբ:

24. Տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում է գործարքներ,

բ) օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում ֆինասական միջոցները,

գ) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

դ) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում է կարգապահական տույժեր,

ե) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

զ) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև,

է) սահմանում է կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունը,

ը) հաստատում է պետական կազմակերպության հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցիչների կանոնադրությունները, եթե սույն լիազորությունը վերապահված չէ կոլեգիալ կառավարման մարմնին,

թ) նշանակում է կազմակերպության ենթակա հիմնարկների, ներկայացուցիչների և մասնաճյուղերի ղեկավարներին, նրանց տալիս է համապատասխան լիազորագրեր,

ժ) օրենքով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

ժա) ապահովում է կազմակերպության գործունեության վերաբերյալ համապատասխան հաշվետվությունների կազմումը և սահմանված կարգով ներկայացումը լիազորված պետական մարմնին,

Ժբ) իրականացնում է օրենսդրությանը չհակասող և կազմակերպության կառավարման այլ մարիիններին չվերապահված այլ լիազորություններ:

25. Ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ կազմակերպության աշխատակիցների առողջությունը և գույքին պատճառված վնասի հատուցումը կատարվում է օրենքով սահմանված կարգով:

IV ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

26. Կազմակերպությունն անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով տիրապետում է իրեն հատկացված և ամրացված գույքին:

27. Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված տրանսֆերտներից և կազմակերպության կողմից միջոցառումների իրականացման ու տարբեր ծառայությունների մատուցման դիմաց վճարումներից, հովանավորչական, նվիրատվական, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ մուտքերից:

28. Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության ընթացքում առաջացած շահույթը օգտագործվում է իր կանոնադրական նպատակներին համապատասխան` Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից սահմանված կարգով:


29. Կազմակերպությունը ունի ինքնուրյուն հաշվեկշիռ, բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության արժույթով կամ արտարժույթով:

V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

30. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպել կամ լուծարվել հիմնադրի որոշմամբ և/կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կազմակերպության լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԶԻԿԱՏԱՐ» ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



Ց Ա Ն Կ

**«ՋԻԿԱՏԱՐ» ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵԿՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ
 ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ**

ՈՒՆ ՈՒՆ/Կ	Գույքի անվանումը	Քանակը (հատ)	Գումարը , դրամ
1	Ավտոմեքենա, Գագ-24Ե	1	160000
2	Սուրճի սեղան	10	256170
3	Աթոռ բանակցային	168	2818872
4	Խոհանոցային աթոռ	80	1427760
5	Բազկաթոռ	4	104400
6	Խոհանոցային սեղան	20	590640
7	բազմոց	3	683433
8	Պահարան	43	931853
9	Երկար սեղան	1	258100
10	Մահճակալ	43	2879710
11	Զգեստապահարան	17	1323365
12	Գրապահարան	5	364435
13	Բանակցային սեղան	1	228132
14	Համակարգչային սեղան	4	165300
15	գրասեղան	5	256165
16	Սպասք լվացող մեքենա	1	268733
17	Վառարան	2	372166
18	Սառնարան HITACHI	2	477534
19	Սառնարան panasonicl	5	788800
20	Հեռուստացույց Philips	4	603200
21	Լվացքի մեքենա	1	248433
22	Համակարգիչ	4	1517668
23	Անխափան սնուցման աղբյուր	4	60000
24	Լազերային տպիչ	2	49164
25	Պրոյեկտոր	1	566467
ԸՆԴՀԱՄԵՆՆՆ			17400500

Հավելված 4
 ՀՀ Բնապահպանության Նախարարի
 2011թ. «մայիսի» «16» N 93-Ա հրամանի

Ց Ա Ն Կ

**«ԶԻԿԱՏԱՐ» ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ
 ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱԿՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆՎՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

Անվանումը	Քանակը (հատ)	Գումարը , հազ. դրամ
Նոր ջրագիծ /մ/	1	22792.0
Գլխավոր մասնաշենք	1	20665.0
Ճաշարան	1	27306.0
Տնակ /քոթեջ/	2	11766.0
Տնակ /քոթեջ/	1	16807.0
Ջրամբար-լողավազան	1	661.0
Ջրամբար /փակ/	1	100.0
Ստորգետնյա պոմպակայան	1	1359.0
Բաց ջրավազան	1	150.0
Ջրավազանի վրա գտնվող դասասենյակ	1	204.0
Սպասարկող անձնակազմի տնակ	1	1782.0
Հսկիչ սենյակ և գլխավոր մուտքի տարածք	1	1893.0
Արտաքին գյուղական տիպի զուգարան	1	213.0
Կեղտաջրերի կուտակման հոր	1	4720.0
Հացի ինքնաշեն փուռ	1	50.0
ԸՆԴԱՄԵՆՆՐ	16	110468.0